



Դայաստանի կենսաբ. հանդես, հավելված 1 (66), 2014

**Heracleum sosnowskyi Manden ԲՈՒՅՍԻ ՖՈՏՈՍԵԽԱԲԻԼԻՉԱՑՆՈՂ
ԱՇԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՐՎԱԾԹԱՅԻՆ ԼԻՊԻԴՆԵՐԻ ԳԵՐՕԶՍԻԴԱՅԻՆ
ՕՅԵՍԻԴԱՑՄԱՆ ՎՐԱ**

Թ. Ե. ՍԵՖԵՐՅԱՆ

Ա.Ի. Ալիխանյանի անվ. ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)
ՀՀ ԳԱԱ Յ. Բուլիհաբյանի անվան կենսաբիոհայի ինստիտուտ
seferyant@yahoo.com

Ուսումնասիրվել է Սոսնովսկու բաղրողան (*Heracleum sosnowskyi* Manden) բույսի հյութի ֆոտոինդուկցված ազատ ռասիկաների ազդեցությունը լիպիդային երկշերտ կառուցեներ հանդիսացող լիպոսումների, ինչպես նաև *Escherichia coli* բակտերիաների K12 (վայրի տիպ) շտամի վրա: Բացահայտվել է, որ *H. sosnowskyi* բույսի հյութի առկաությունը միջավայրում անդրմասնուշակագույն ճառագայթներով ֆոտոինդուկցման արդյունքում առաջ է բերում ինտենսիվ ազատ ռասիկալային շղթայական մեխանիզմիվ ընթացող թաղանթային կառուցեների լիպիդների գերօքսիդային օքսիդացում, որը արտահայտվում է թիմյուլինեսցենտում ինտենսիվության մակարդակի և լիպիդների օքսիդացման վերջնական արգասիքի՝ մալոնային երկարեհիոդի կունցենտրացիայի ավելացմամբ:

*Լիպոսում - ազատ ռասիկալներ - Փոտոսեխաբիզմում -
թիմյուլինեսցենտում - Սոսնովսկու բաղրողան*

Исследовано влияние фотоиндуцированных свободных радикалов сока борщевика Сосновского (*Heracleum sosnowskyi* Manden) на липидные бислойные мембранны – липосомы, а также на бактерии *Escherichia coli* K12. Выявлено, что присутствие в среде сока борщевика Сосновского при фотоиндуцировании ультрафиолетовыми лучами приводит к интенсивному цепному свободно-радикальному перекисному окислению липидов мембранных структур, которое проявляется повышением интенсивности хемилюминесценции и концентрации конечного продукта перекисного окисления липидов – малонового дигалдегида.

*Липосома - свободные радикалы - фотосенсибилизация -
хемилюминесценция - Борщевик Сосновского*

The influence of photoinduced free radicals of Sosnowsky's Hogweed (*Heracleum sosnowskyi* Manden) sap on lipid bilayer membranes – liposomes, as well as on the bacterium *Escherichia coli* K12 is investigated. It has been discovered that the presence of sap of *H. sosnowskyi* in medium at the ultraviolet irradiation leads to the intensive free radical chain peroxidation of the lipids of bilayer structures, which is evidenced by an increase in the intensity of chemiluminescence and the concentration of the end-product of lipid peroxidation-malonic dialdehyde.

Liposome - free radicals - chemiluminescence - fotosensitizing - Sosnowsky's Hogweed

Ներկայում բժշկության մեջ լայն տարածում են գտել ֆոտոդինամիկ թերապիայի մեթոդները, որոնք հիմնված են ֆոտոսենսիբիլիացիոն կյութեր պարունակող տարբեր դեղամիջոցների վրա [7]: Ֆոտոդինամիկ թերապիայում կիրառվող ֆոտոսենսիբիլիգացլող լյութերի մեջ մասը հիմնականում է եպիտրամագնիսական սպեկտրի տեսանելի տիրույթում արտահայտված ֆոտոսենսիբիլիգացլող հատկությամբ միացություններ են: Առկա են նաև ֆոտոսենսիբիլիգացլող հատկությամբ միացություններ, որոնք գործում են անդրմանուշակագույն տիրույթի ալիքների ազդեցության դեպքում: Այս լյութերի մի գագակի մասը բավական մեծ քանակներով առկա է տարբեր բուսատեսակներում: Այդ շարժին է պատկանում Սասնովսկու բավարդական արդյունակություն (*Heracleum sosnowskyi* Manden), որը պարունակում է մեծ քանակությամբ ֆուրանկուլիմարիններ, մասնավորապես կանատուռքին, բերգապտեն, ամբելիփերոն, անգելիցին և սփոնուին [3, 6]: *H. sosnowskyi* բույսը, ունենալով բավական մեծ հարմարվողականություն, շրջակա միջավայրում ներկայում ունի լայն տարածվածություն [8]: Պարունակելով մեծ քանակով ֆուրանկուլիմարիններ *H. sosnowskyi* բույսը ունի ֆոտոսոքսիկ հատկություն: Այս բույսի հյութը ընկերելով կարծնատունների մաշկի վրա արևի լուսի ազդեցությամբ առաջ է բերում 1-3րդ աստիճանի այրվածքներ [2]: Տոքիկ էֆեկտներ առաջանում են նաև սննդում այս բույսից մեծ քանակությամբ թարմ վիճակում օգտագործելիս: Այրվածքների առաջացման մեխանիզմի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ ֆուրանկուլիմարինները անդրմանուշակագույն ճառագայթման դեպքում առաջացնում են սինգիլետ թթվածին [12], որն իր հերթին առաջ է բերում ազատ ռադիկալային բնույթի բազմաթիվ պրոցեսներ: Ելեկտրո վերը բերվածից, աշխատանքում ուսումնասիրվել է բչշի կեսնագործունեության համար առանձնակի կարևոր նշանակություն ունեցող թաղանթային կառույցներում ընթացող ազատ ռադիկալային գերօքսիդային օքսիդացման պրոցեսների վրա *H. sosnowskyi* բույսի ֆոտոսենսիբիլիգացլող ազդեցությունը:

Նյութ և մեթոդ:

Գիտափորձերում օգտագործվել են ՀՀ Արարատի մարզի "Խոսրովի անտառ" արգելոց տարածքում ազատ աճող *H. sosnowskyi* բույսի ցողունային հատվածները: Բույսի հյութը՝ բուսամգվածքը ստացվել է թարմ բույսի ցողունի 1 սմ երկարությամբ կորատված հատվածներից, սաաը (~4 °C) պայմաններում, մամկնա միջոցով: Լիպոսումների ստացման համար օգտագործվել է նախատեսված լիակուային խառնուրդ Sigma-Aldrich L 4395: Լիպոսումները ստացվել են 0,1% NaCl լուծույթում 0,01 մգ/մլ կոնցենտրացիայով ֆուֆոլիայինների կախույթի գերձայնային մշակման եղանակով [9, 10]:

Դիտարկվող ազատ ռադիկալային մեխանիզմը ընթացող գործընթացների ուսումնասիրման համար ըստրվել է ընթացիկինեսցենտային (ՁԼ) անալիզի և մալոնային երկարութիղի (ՄԵՎ) սպեկտրաֆոտոմետրիկ ողոշման մեթոդներով:

ՁԼ անալիզը կատարվել է H9319-02 (Hamamatsu-Japan) քվալտոմետրիկ սարքի միջոցով, իմպուլսային ռեժիմում [11]: ՁԼ գրանցումների ժամանակ ֆոտորազմապատկիշն ներդրված լարումը կազմել է 900 Վ, իսկ ինտեգրացման ժամանակը՝ 1 վ: Նմուշների ճառագայթահարման համար որպես անդրմանուշակագույն ճառագայթման առյուղ օգտագործվել է DRT-125 տիպի լամպ, որի առաքման տիրույթը կազմում է 230-400 նմ: Նմուշների ճառագայթահարումը կատարվել է կյուվետով, որտեղ ճառագայթահարումը նյութի շերտու ունեցել է 5 մմ հաստություն, իսկ մակերեսը գտնվել է լույսի արդյունից 100 մմ հեռավորության վրա: ՁԼ ինտենսիվության գրանցումն իրականացվել է օպտիկական բաժակում, որում փորձարկվել հերուլի ծավալը կազմել է 3 մլ, իսկ ավելացվող նմուշների ծավալը եղել է 0,25 մլ: ՁԼ ինտենսիվության գրանցումները կատարվել են ճառագայթահարման ավարտից 5 վ անց: ՁԼ ինտենսիվությունների գնահատման համար վերցվել են ՁԼ լուսագումարի միջին արժեքները 60 Վ գրանցման համար:

Լիակուային գերօքսիդային օքսիդացման վերջնական արգասիք՝ ՄԵՎ քանակական որոշումը կատարվել է սպեկտրաֆոտոմետրիկ եղանակով՝ 2-թիոբարիտուրաթթվի թեստի միջոցով, Specord M-40 սպեկտրաֆոտոմետրի օգնությամբ, 532 նմ ալիքի երկարության տակ [5]:


E. coli K12 (վայրի տիպ) շտամը աճեցվել է անաերոր պեպտոնային միջավայրում (ρH 7,2-7,4), 0,2 %-անոց գյուկոզի ավելացմամբ: Բակտերիաները աճեցվել են 18 ժ, 370 °C չերմաստիճանում: Բակտերիաների զանգվածը ստացվել է աճման միջավայրու 20 րոպե 5000 պտ./րոպե արագությամբ կրկնակի ցենտրիֆուզմամբ, որտեղ միջանկյալ լուծիչ է հանդիսացել թորած ջուրը [1, 4]: Բակտերիաների փորձարարական կախույթը ստացվել է անշատված բակտերիալ պրեցիպիտատի 100 անգամ նորացմամբ (0,1% NaCl): Զափումներն

իրականացվել են 20°C ջերմաստիճանում: Գրանցված թL արժեքների միջին թվաբանական շեղումները չեն գերազանցում 5%-ը: Ստացված արդյունքները ենթարկվել են ստատիստիկ վելուծության և գնահատվել ըստ Սոյունենտի t-թեստի: Արդյունքները համարվել են հավաստի * = $p < 0.05$ արժեքի դեպքում:

Արդյունքներ և քննարկում:

H. soshonovskiy բույսի ֆուռուսնսիրիլիզացնող հատկության ուսումնասիրման համար որպես թաղանթային մողելային համակարգ մեր կողմից ընտրվել են լիպոսումները, որոնց համախ դիտարկում են որպես թջի լիպիդային երկշերտ թաղանթների պազեցված տարերակ: Խևկ ընական թաղանթային համակարգերի վրա *H. soshonovskiy* բույսի ֆուռուսնսիրիլիզացնող հատկության ուսումնասիրման համար օգտագործվել են *E. coli* K12 բակտերիաները:

Պարզելու համար թL ինտենսիվության մեջ փորձարկվող նյութերի սպոնտան թL մասնաբաժինը, սկզբում չափվել են վերջիններին սպոնտան թL արժեքները: Բուսամզվածքի, լիպոսումների կախույթի և բակտերիալ կախույթի սպոնտան թL արժեքները թերված են նկ. 1-ում: Չափվել են նաև փորձարկվող նյութերի միմիանց հետ հավանական փոխազդման սպոնտան թL արժեքները ֆուռուսնսիրմացված թL (ֆթL) ինտենսիվության մեջ դրանց մասնաբաժինը գնահատելու համար: 3 մլ/0,25 մլ համապատասխան ծավալների դեպքում լիպոսումային կախույթի և բակտերիալ կախույթի հավանական սպոնտան թL արժեքները բուսամզվածքի ավելացմամբ թերված են նկ. 1-ում: Գնահատվել են նաև ֆթL ինտենսիվության մեջ փորձարկվող նյութերի սեփական ֆթL մասնաբաժինը:




Նկ.1. *H. Soshonovskiy* բույսի հյութի ազդեցությունը լիպոսումների և բակտերիաների ֆթL-ս վրա:
1. Բուսամզվածքի թL (3 մլ 0,1Մ NaCl + 0,25 մլ հյութ), 2. Լիպոսումային կախույթի թL, 3. Բակտերիաների կախույթի թL, 4. Բուսամզվածքի ֆթL (3 մլ 0,1Մ NaCl + 0,25 մլ հյութ), 5. Լիպոսումային կախույթի ֆթL, 6. Բակտերիաների կախույթի ֆթL, 7. Լիպոսումային կախույթի և նրան ավելացված բուսամզվածքի թL, 8. Լիպոսումային կախույթի և նրան ավելացված բուսամզվածքի ֆթL, 9. Բակտերիաների կախույթի և նրան ավելացված բուսամզվածքի թL, 10. Բակտերիաների կախույթի և նրան ավելացված բուսամզվածքի ֆթL:

Ֆուռուսնսիրման ժամանակը բոլոր տարրերակներում եղել է հաստատուն և կազմել է մոտ 50 վ: Վերջինս որոշվել է ուղղորդող փորձերի միջոցով որպես բուսամզվածքի ավելացմամբ լիպոսումային կախույթի ֆթL մաքսիմալ ինտենսիվություն ապահովող մինիմալ ժամանակային արժեք (նկ. 2):


Գրանցված թL ինտենսիվության արժեքները համեմատելով միմյանց հետ կարելի է արձանագրել, որ բուսամզվածքի ավելացմամբ լիպոսումային կախույթի ֆթL ինտենսիվությունը ստուգիչ տարրերակների համեմատ ունի ակնհայտ բարձր ցուցանիշ՝ մոտ 546 % (նկ.2): Նմանատիպ բարձր արժեք է գրանցվում նաև բուսամզվածքի ավելացմամբ բակտերիաների կախույթի ֆթL ինտենսիվության համար մոտ 307 % (նկ.2):

Ինչպես հայտնի է, լիպիդների գերօքսիդային օքսիդացման գնահատման ուղղակի եղանակներից է ՄԵԱ-ի որոշումը 2-թիոբարբիտուրաթթվի միջոցով [1, 4]: Ի լուսում ՔՀ անալիզի մեթոդին կատարվել է բուսամզվածքի առկայությամբ ֆուտոհնդուկցված ազատ ռադիկալների ազդեցությամբ պայմանավորված ՄԵԱ-ի քանակական փոփոխության գնահատում լիպոսումային և բակտերիալ կախույթներում:



Նկ. 2. *H. sosnowskyi* բույսի հյութի ավելացմամբ լիպոսումային կախութի ֆռԼ ինտենսիվության կախվածությունը ֆուտոհնդուկցման տևողությունից:

Զափումները ցույց տվեցին, որ բուսամզվածքի առկայության դեպքում ճառագայթահարումից հետո լիպոսումային և բակտերիալ կախույթներում ՄԵԱ-ի քանակը ավելանում է համապատասխանաբար 344 % և 324 %-ով, ի համեմատ առանց բուսամզվածքի ավելացմամբ ստուգիչ տարրերակների (Նկ. 3):



Նկ. 3. ՄԵԱ-ի քանակական ցուցանիշները լիպոսումների և բակտերիաների կախույթներում նորմայում, ճառագայթահարումից հետո և *H. sosnowskyi* բույսի հյութի ավելացմաբ ճառագայթահարումից հետո:
1. ՄԵԱ-ի քանակը լիպոսումային կախույթում: 2. ՄԵԱ-ի քանակը լիպոսումային կախույթում բուսամզվածքի ավելացմաբ և ճառագայթահարումից հետո: 3. ՄԵԱ-ի քանակը բակտերիաների կախույթում: 4. ՄԵԱ-ի քանակը բակտերիաների կախույթում բուսամզվածքի ավելացմաբ և ճառագայթահարումից հետո:

Գրանցված ՔՀ ինտենսիվության և ՄԵԱ-ի քանակական աճը վկայում է այն մասին, որ բուսամզվածքի ֆուրանոկումարինների ֆուտոհնդուկցման արդյունքում առաջացած ազատ ռադիկալները փոխազդում են լիպոսումներում լիախոյային երկշերտի հետ, առաջ բերելով ազատ ռադիկալային շղթայական մեխանիզմին ընթացող լիպիդների գերօքսիդային օքսիդացում:

Ընդհանրացնելով ստացված արդյունքները, կարելի է եզրակացնել, որ բուսամզվածքից առաջացող ֆոտոդինամիկ այրվածքների հիմքում ընկած է հյութի բաղադրության մեջ առկա ֆուրանոկումարինների ֆոտոինդուկցման արդյունքում առաջացող ազատ ռադիկալների կողմից քչի թաղակթային կառույցների լիպիդների շղթայական մեխանիզմով ընթացող գերօքսիդային օքսիդացումը, որը շարունակվում է նաև անդրմանուշակագույն ճառագայթների ներգործությունից հետո։ Կերպ բերված տվյալները կարող են օգտակար լինել *H. sosnowskyi* բույսի հիմքի վրա պատրաստվող դեղամիջոցների մշակման, ինչպես նաև բույսի հետ շփումից առաջացած այրվածքների բուժման պրոցեսում։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թողումյան Ա., Բաղրամյան Կ., Փոլայյան Ա. Կենսաբանական թաղանթների կենսաֆիզիկա և կենսաներգետիկա։ Լարորատոր աշխատանքների ձեռնարկ։ Երևան, Կորպական բարեփոխումների կենտրոն, 2003.
2. Դալյան Ի.Վ., Չաճին Ի.Փ. Методические рекомендации по борьбе с неконтролируемым распространением ростений борщевика Сосновского. Республика Коми, Сыктывкар, 2008.
3. Մորադյան Ա.Ա., Առիկյան Հ.Վ. Кумариновые производные видов *Heracleum L.* из флоры Армении - *H. sosnowskyi* Mand. H. *Trachyloma* Fish. Et Mey., // Биолог. ж. Аր., 29 (9), 1976.
4. Պիմենովա Մ.Ի., Գրեչուշկինա Հ.Հ., Ազովա Լ.Г., Սեմենովա Ե.Բ., Մայնիկովա Շ.Ի. Руководство к практическим занятиям по микробиологии (под. ред. Н. С. Егорова), М., Издательство Московского университета, 1983.
5. Տմալյան Ի.Դ., Գարիշևիլի Տ.Գ. Современные методы в биохимии (под. Ред. Ореховича В. Н.), М., Медицина, 1977.
6. Յորլովա Լ.Յ., Չերնյակ Դ.Մ., Կյուտօվա Օ.Պ. Фурокумарины *Heracleum sosnowskyi* и *Heracleum moellendorffii*, // Тихookeанский медицинский журнал, 2, с. 91-93, 2013.
7. Alison R.R., Downie G.H., Cuenca R., Hu X., Childs C.Jh., Sibeta C.H. Photosensitizers in clinical PTD, // J. Photodiagnosis and Photodynamic Therapy, Elsavier, 1, p 27-42, 2014.
8. Jakubowicz O., Źaba C., Nowak G., Jarmuda S., Źaba R., Marcinkowski J.T. *Heracleum sosnowskyi* Manden. // J. Annals of Agricultural and Environmental Medicine, 19, 2, p. 327-328, 2012.
9. Medda S., Das N., Mahato S.B., Mahadevan P.R., Basu M.K. Glycoside-bearing liposomal delivery systems against macrophage-associated disorders involving *Mycobacterium leprae* and *Mycobacterium tuberculosis*.// Indian J. Biochemist and Biophysics, 32, 3, p. 147-151, 1995.
10. Mueller P., Rudin D.O., Tien H.T., Wescott W.C. Methods for the Formation of Single Bimolecular Lipid Membrane in Aqueous Solution. // J. Phys. Chem, 67, p.534-535, 1963.
11. Seferyan T.Ye., Mamikonyan V.Kh., Hovhannisanian A.H., Elbakyan V.L. "Automated chemiluminometric equipment for biomedical and chemical analyses" The collection of articles of IV International Scientific and Practical Conference "High-tech, basic and applied research in physiology and medicine", V 2, -138p., November 15-16, 2012, St. Petersburg, Russia.
12. Wainwright M. Photodynamic antimicrobial chemotherapy (PACT). // J. JAC, 42, p. 13-28, 1998.